«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

25 դեկտեմբերի, 2024 թվական, N 19-L

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌԵԿՏՈՐԻ ԱՌԱՋԱՐԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի թիվ 914-Ն որոշմամբ հաստատված «Պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման կարգի» 4-րդ կետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 23-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված՝ Երևան քաղաքի Ալեք Մանուկյան 1 հասցեում գտնվող տարածքի մի մասը (23.5 քմ.) վարձակալության տրամադրելու վերաբերյալ առաջարկությունը և հայտ ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ **Ս. Պապիկյան**

25 դեկտեմբերի 2024 թ.

ք. Երևան